ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը 2017թ. կազմակերպում է համահայկական մանկապատանեկան նկարչական 7-րդ մրցույթ-փառատոնը՝ նվիրված ազգային տոներին:

7-րդ մրցույթ-փառատոնն անդրադառնում է հայկական ժողովրդական (օրացուցային և կենցաղային), եկեղեցական և պետական տոներին:

Մրցույթ-փառատոնի նպատակն է նպաստել երեխաների՝ հայ ազգագրության, երկրագիտության իմացությանը, նրանց կողմից ազգային աշխարհայցքի, առաձնահատկությունների, գեղագիտական արժեքների յուրացմանը, առանձին պատմական իրադարձությունների, հոգևոր կյանքի փաստերի արժևորմանը:

Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել արվեստի հանդեպ սեր և կարողություն դրսևորող 6-18 տարեկան հայերեն ուսուցմամբ վարժարանների և կրթօջախների (այդ թվում՝ մեկօրյա), մշակութային կենտրոնների սաները, ինչպես նաև այլ դպրոցների նկարչական կամ արվեստի խմբակներում ընդգրկված հայ երեխաներն ու պատանիները:

Մրցույթ-փառատոնի առաջին փուլում հաղթողների աշխատանքները կներկայացվեն Գեղագիտության ազգային կենտրոնի ցուցահանդեսում: Ցուցահանդեսին մասնակցած բոլոր աշխատանքները կտպագրվեն ցուցահանդեսի պատկերագրքում:

Մասնագիտական հանձնաժողովի եզրակացության, ինչպես նաև ցուցահանդեսի հանդիսատեսի քվեարկության արդյունքներով կհայտարարվեն երկրորդ փուլի հաղթողները: Մրցույթ-փառատոնի առաջին փուլի բոլոր հաղթողները կստանան ցուցահանդեսի պատկերագիրք: Երկրորդ փուլում հաղթողները կստանան նաև հիմնական և խրախուսական մրցանակներ:

Սույն հայտարարությանը կցվում է մրցույթ-փառատոնի անցկացման կարգը:

Հավելյալ հարցերով կարելի է դիմել.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն.
հեռ. +374 10 58-13-91
ֆաքս. +374 10 52-73-43
Էլ.փոստ. spyurq@yahoo.com
Կայքէջ. www.edu.am, www.armedu.am
Էջ Facebook-ում. «Սփյուռքի բաժին ՀՀ կրթգիտնախ»

Գեղագիտության ազգային կենտրոն.
հեռ. +374 91 84-59-81 Լիանա, +374 99 73-18-26 Եվա
Էլ.փոստ. nkarchakan@gmail.com
Կայքէջ. www.nca.am
Էջ Facebook-ում. «National Center of Aesthetics»

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Գեղագիտության ազգային կենտրոն

Համահայկական մանկապատանեկան նկարչական 7-րդ մրցույթ-փառատոն՝ նվիրված ազգային տոներին

VII մրցույթ-փառատոնի շրջանակներում մանկական ստեղծագործության առարկա են հանդիսանում հայկական ժողովրդական, եկեղեցական և պետական տոները:

Ավանդական տոնական մշակույթը հանդիսանում է ազգային աշխարհընկալման բյուրեղացված ձև, բազմադարյան փորձի արտացոլանք և ավանդույթների, ծեսերի մի ամբողջականություն: Վերջիններիս շնորհիվ պահպանվում և խորանում է ազգային մշակութային ինքնությունը, փոխանցվում և սերմացվում են ազգին բնորոշ աշխարհայացքային, բարոյական և գեղագիտական արժեքները:

Այս պատճառով տոնական ավանդույթների ուսուցանումը և վերարտադրությունը մեծ տեղ է զբաղեցնում ազգային և գեղագիտական դաստիարակության գործում:

Հայ ժողովրդի պատմության մեջ ազգային տոնական մշակույթը կերտվել է ոչ միայն բուն Հայաստանի տարածքում, այլև բազմաթիվ հայկական գաղթավայրերում, ինչը դարձնում է այն էլ ավելի հարուստ և իրապես արժեքավոր:

Առանձնահատուկ տեղ տոնական մշակույթում պատկանում է եկեղեցական և պետական տոներին: Դարեր շարունակ Հայ Առաքելական եկեղեցին հանդիսացել է ազգային ինքնության բաղադրիչներից մեկը, ինչպես նաև ժողովրդական մշակույթի պահպանման գրավականը: Ինչ վերաբերում է պետական տոներին, ապա նրանց մի մասը տոնվում է նաև Հայաստանի Հանրապետությունից դուրս՝ Սփյուռքում՝ փոխանցելով նրանց ազգային բնույթ:

<u>Մրցույթ-փառատոնի նպատակն</u> է նպաստել երեխաների՝ հայ ազգագրության, երկրագիտության իմացությանը, նրանց կողմից ազգային աշխարհայցքի, առանձնահատկությունների, գեղագիտական արժեքների յուրացմանը, առանձին պատմական իրադարձությունների, հոգևոր կյանքի փաստերի արժևորմանը:

<u>Սփյուռքի մասնակիցներից ակնկալվում</u> է պատկերել կամ պատրաստել

1. տոներ, ծեսեր, ավանդույթներ, որոնք պատմականորեն տոնվել են նրանց համայնքում կամ շարունակվում են տոնվել ներկայումս *(Վարդանանց, Թարգմանչաց, Հանրապետության տոներ, Նավասարդ և այլ)*: Առավել մեծ հետաքրքրություն հանձնաժողովի համար կարող են ներկայացնել տեղական նշանակության տոներ *(քաղաքի հոբելյանը, հուշարձանի կառուցումը, տեղական նշանակության հերոսների մեծարումը և այլն)* և այն ավանդույթները կամ ավանդութային առանձին տարրերը *(սրբատեղի, հավաքատեղի, ճաշատեսակ, վարվելակերպ, ավանդապատում և այլն)*, որոնք ձևավորվել են սույն համայնքում և հանդիսանում են նրա առանձնահատկությունը:
2. որևէ տոնի, ծեսի կամ ավանդույթի կատարման հետ կապված առարկաներ, խորհրդանիշներ, օրինակ՝ խաղալիքներ, գործիքներ, մարմնավորված կերպարներ *(պառավ Ձմեռ, Կաղանդ պապի, Սբ.Սարգիս և այլն)*:

Պատկերները կամ օբյեկտները պետք է ուղեկցվեն կարճ նկարագրությամբ, թե ինչ է պատկերված կամ պատրաստված:

Հայաստանի և Արցախի մասնակիցներից ակնկալվում է անդրադարձ կատարել որևէ ժողովրդական (ժողովրդական և կենցաղային), եկեղեցական կամ պետական տոնին, նրա առանձին տարրերին, խորհրդանիշներին: Աշխատանքները (պատկերները կամ օբյեկտները) պետք է արտահայտեն տվյալ տոնի իմաստը, էությունը, հոգեբանական տրամադրվածությունը, զգացմունքային լիցքը: Նրանք պետք է համապատասխանեն ազգագրական նյութին: Նախագծային աշխատանքներում կարևոր է ներկայացնել տոնական միջոցառումների հաջորդականությունը, կատարման փուլերը (նախապատրաստում, բուն տոնակատարություն, ավարտ), մասնակիցների փոխներգործությունը ու փոխլրացումը:

Բոլոր աշխատանքները պետք է ուղեկցվեն կարճ բացատրությամբ, թե ինչ է պատկերված/պատրաստված, ինչու է ընտրված հենց այս տոնական մշակույթի տարրը և ինչպիսին է հեղինակի վերաբերմունքը դրա նկատմամբ: Նախագծային աշխատանքի դեպքում կարող է ներկայացվել մեկ միասնական բացատրություն կամ ամեն հեղինակից առանձին՝ մանկավարժի հայեցողությամբ:

Մրցույթ-փառատոնի մասնակիցները

Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել երկու տարիքային խմբեր.

- 6-13
- 14-18:

Մրցույթ-փառատոնի անցկացման կարգը

Մրցույթը նախատեսված է անցկացնել երկու փուլով:

Առաջին փուլում աշխատանքները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ մինչև ս.թ. հուլիսի 4-ը: Մասնագիտական հանձնաժողովի կողմից ընտրվում են լավագույն աշխատանքները՝ ցուցահանդեսի կազմակերպման և կատալոգի տպագրման նպատակով:

Հանձնաժողովի կողմից մերժվելու են արտատպած, կրկնօրինակված աշխատանքներ: Մասնակիցները պետք է ինքնուրույնություն դրսևորեն տոների, ծեսերի, ավանդույթների իմասնավորման և գնահատման մեջ: Չեն ընդունվելու նաև այն աշխատանքները, որոնք նախկինում մասնակցել են որևէ մրցույթի, ցուցադրվել են ցուցահանդեսներում կամ հրապարակվել են տպագիր կամ համացանցային աղբյուրներում:

Երկրորդ փուլում մասնակիցները ներկայացնում են իրենց աշխատանքների բնօրինակները՝ ցուցահանդեսի համար: Ցուցահանդեսին ներկայացված նկարների հեղինակներից կընտրվեն հիմնական և խրախուսական մրցանակակիրները:

Ստեղծագործությունների գնահատման հիմքերը

Աշխատանքների գնահատման ընթացքում նախապատվությունը տրվելու է տեխնիկական և բովանդակային պահանջների համապատասխանությանը, գաղափարի գեղարվեստական կատարման յուրօրինակությանը և որակին, ազգագրական նյութի իմացությանը:

Նկարները պետք է լինեն A2 (420x594մմ) կամ A3 (297x420մմ) չափի: Նշված չափերին չհամապատասխանող աշխատանքները մերժվելու են:

Աշխատանքները կարող են կատարվել կերպարվեստի ցանկացած ճյուղի միջոցով (գրաֆիկա, գեղանկարչություն, քանդակ, խեցեգործություն, դեկորատիվ կիրառական արվեստ և այլն), ցանկացած նկարչական նյութի օգնությամբ (ջրաներկ, գուաշ, ակրիլ, ածուխ, պաստել, կավ, տեքստիլ, մետաղ, փայտ և այլն):

Մեթոդական աջակցություն

Մեթոդական աջակցությունը տեղի կունենա մարտ ամսին: Ձևի և ժամկետների մասին կհայտնվի լրացուցիչ:

Ստեղծագործությունների ներկայացման պայմանները

Առաջին փուլում աշխատանքները ներկայացվում են PDF կամ JPG ձևաչափով Գեղագիտության ազգային կենտրոնի կողմից սպասարկվող **nkarchakan@gmail.com** էլեկտրոնային հասցեով մինչև 2017թ. հուլիսի 4-ը ներառյալ: Պատկերների մեծ քանակի և ծավալի դեպքում ցանկալի է դրանք ուղարկել ոչ թե կցելով նամակին, այլ տեղադրելով որևէ առցանց ալբոմում (օրինակ՝ Picassa, 4shared.com և այլ):

Առաջին փուլում պատկերը ուղարկելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ **պարտադիր** կանոնները.

1. PDF կամ JPG ֆայլերը ունենան նկարի հեղինակի ազգանունը և անունը՝ որպես ֆայլի անվանում,
2. էլեկտրոնային նամակում նշված լինի ստեղծագործության անվանումը, չափը և տեխնիկան, հեղինակի անուն, ազգանունը, բնակության երկիրը, քաղաքը, տարիքը և կրթական հաստատությունը (այն դեպքում, եթե նկարը ներկայացվում է ոչ թե անհատի, այլ որևէ կրթօջախի կողմից) և կապի միջոց՝ էլ. հասցե, հեռախոսահամար, հասցե:
3. նկարչություն դասավանդող մանկավարժի անունը, ազգանունը:

Նույն տեղեկություններ պետք է լինեն նաև փակցված **ստեղծագործության վրա**՝ բնօրինակը երկրորդ փուլին ներկայացնելու ժամանակ:

Երկրորդ փուլի համար առաջին փուլն անցած աշխատանքների բնօրինակները մինչև սեպտեմբերի 20-ը փոստով կամ առձեռն պետք է փոխանցվեն Գեղագիտության ազգային կենտրոնին.

National Centre of Aesthetics, Children's art museum, Abovyan 13, Yerevan, 0001, Armenia Yerevan,

0001, Երևան, Աբովյանի 13, Գեղագիտության ազգային կենտրոն, Մանկական ստեղծագործության թանգարան

Ծրարի վրա պետք է լինի «HAMAHAYKAKAN NKARCHAKAN MRTSUYT» նշումը:

Պարգևները

Մրցույթ-փառատոնի առաջին փուլի բոլոր հաղթողները կստանան ցուցահանդեսի պատկերագիրքը (կատալոգ):

Երկրորդ փուլում հաղթողները կստանան նաև մրցանակներ:

Մրցույթ-փառատոնի ժամանակացույցը

N	Գործողություն/աշխատանք	Ժամկետ
1.	Առաջին փուլում աշխատանքների ներկայացման վերջնաժամկետ	հուլիսի 2
2.	Առաջին փուլի արդյունքների ամփոփում	հուլիսի 15
3.	Երկրորդ փուլի աշխատանքների բնօրինակների ներկայացման վերջնաժամկետ	սեպտեմբերի 20
4.	Ցուցահանդեսի կազմակերպում	հոկտեմբերի ընթացքում
5.	Հաղթողների հայտարարում, պարգևատրում և փակման արարողություն	դեկտեմբեր (պայմանական)